

Լ. Վ. Խանգադյան

ՀԵՏԱԽՈՒՋԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐ ԿԻՐՈՎԱԿԱՆԻ ՄԵՐՋԱԿԱՅՔՈՒՄ

1959 թ. լուծարված Հնագիտական հետախույզական աշխատանքների ընթացքում, կիրովականի ծայրամասում՝ «Փոսի ճոճեր» կոչվող հանդամասում, մեզ հաջողվեց հայտնաբերել աղորիքների մասեր, օբսիդանքներ, խեցեղենի բեկորներ, Հնադարաբանության ցուց տվեց, որ այս հանդամասը բնակատեղի է եղել սկսած դեռևս էնեոլիթյան ժամանակաշրջանից:

Բնակատեղին գտնվում է բարձրագույն մի վայրում: Այն իրենից ներկայացնում է դադաթու՝ հյուսիս ուղղված բարձրագույն հողանկյունաձև մի հրմանդան երկու կողմից շրջապատված խորը ձորերով (արևմուտքից «Շուրկուտի ձորով», իսկ արևելքից՝ «Հալլարիկի ջրով»), որոնց միջով փոքրիկ գետակներ են հոսում: Հարավից այն ներկայացնում է մի աստիճանաձև բարձունք կազմված 10 հսկա տեղաքաններից, որոնցից յուրաքանչյուրը ունի մոտ 15 մ լայնություն: Հրմանդանի դադաթու հարթ է, տափակ, դարձր շարունակ այն ծառայել է որպես հանդամաս: Այժմ էլ նրա, ինչպես հարթ դադաթու, այնպես էլ տեղաքանների մակերեսները օգտագործվում են որպես ցանքատարածություններ:

1960 թ. բնակատեղիի երկայնքով, ջրամբարի և ջրատար խողովակների համար արևմտյան կողմից վերից-վար՝ հյուսիսից-հարավ գծով, 2—3 մ խորությամբ, 3 մ լայնությամբ և մոտավորապես 250 մ երկարությամբ խորամաստ փորվեց:

Այս կտրվածքը երևան բերեց կուտուրական մնացորդներով հագեցված շերտեր: Այստեղ բնակատեղիի օ-րդ տեղաքանի վրա, խորամաստ աչ եզրին, 25 քառ. մետր տարածության վրա, կատարեցինք մեր հետախույզական պեղումները:

Վերին, կես մետրանոց հումուսային շերտը զերծ էր քարերից: Նրանք հանդիպում էին էնեոլիթյան և ուշ շրջանի խեցեղենի բեկորներ, կուտուրական շերտից այն անջատված էր մոտ 4 սմ հաստությամբ կավային ստերիլ շերտով:

Առաջին կուտուրական շերտը, որն սկսվում էր դեռևս մակերեսից մոտ 55 սմ ցածր, բավական հարուստ էր ալյուրած փայտի կտորներով, ոսկրային մնացորդներով և կերամիկայի բեկորներով:

Քառակուսու հյուսիս-արևմտյան անկյունում, մոտ 1,7 մ խորության վրա բացվեց քարե մի կլոր կառուցվածք, որն արևմտյան կողմից փակված էր: Այն բավական խորն էր բնկած և նրա հիմքը հասնում էր մինչև 2-րդ շերտի հատակը: Ունեն 1,3 մ բարձրություն և 1,5 մ տրամագիծ: Պատերը մեկ շարք անկանոն, անմշակ, մանր ու մեծ քարերի շոր շարվածք էին ներկայացնում: Որան կից նույնատիպ մի կլոր կառուցվածք բացվեց 2-րդ կուտուրական շերտը պեղելիս, որից միայն մի փոքր մասն էր պահպանված 30 սմ բարձրությամբ: Այս կլոր կառուցվածքների ինչ ինչից ղեկավար է որոշել, հավանաբար դրանք պահեստի դեր են կատարել:

Ինչպես վերը նշվեց, 1-ին կուտուրական շերտը բավական հարուստ էր անդարդ և դարձր խեցեղենի բեկորներով, որոնք բաժանվում են հետևյալ խմբերի.

1. Ոչ շատ բարձր վզով, դեպի դուրս լայնացող շրթերով սափորների մասեր՝ աղեղնաձև կանթով (աղ. 1, նկ. 1):

2. Մեծ կովկիթի մաս, լայնաբերան, կարմրագույն, դեպի դուրս ուղղված շրթով: Ունեն ներծկված ժապավեններ, որոնց վրա փայլեցման միջոցով ալիքաձև դոտիկներ են արված (աղ. 1, նկ. 2, ձախից վերինը):

3. Թաղարի մաս մոխրագույն, լայնաբերան, ոչ շատ բարձր ուղիղ կանգնած վզով, դուրս սկզբում, անկյուն կաղնու շուրթով: Վզի հիմքում, ունի հորիզոնական գոտու վրա թևեր հաստիկաձև ակոսներ (աղ. 1, նկ. 2, ներքին շարք, աջից 1-ին):

4. Թաղարի մաս լայնաբերան, անկյուն, ուղղանկյուն իրանով, ուժեղ դեպի դուրս կախված շուրթերով, նրբախեղի, դորշագույն: Արտաքինից փայլեցման միջոցով ուղղահայաց և հորիզոնական իրար հասող անկանոն գծեր են արված (աղ. 1, նկ. 2, ձախից 1-ին):

ձ. Քրեականների և թասերի բեկորներ սե, մոխրագույն և բաց կարմրավուն, ներձկված նեղ վզով և զեպի զուրս լայնացող նուրբ շուրթերով: Համարյա բոլորի ուսերին ուղեֆ և ներձկված զոտիներ: Թեղեֆ զոտիները զարդանախշված են շղթայաձև, պարանոձե, ատամնաձև, թեք հատիկաձև և բջիջաձև զարդանախշերով (աղ. 1, նկ. 3):

6. Փխալաների մասեր զեպնա-կարմրավուն, երկու տիպի.

ա) Հաստ խեցիով, շուրթը ոչ շատ բարձր և ներձկված, որֆ կոնաձև, զեպի ներս թերթիկ իրանի հետ միանում է սուր անկյունով: Խեցին բաց կարմիր է: Ներսում և արտաքին մակերևույթի վրա ունի զեպնա-կարմրավուն փայլ: Բեկորներից մեկի վզին փայլեցման միջոցով ուղղահայաց զծիկներ են արված (աղ. 2, նկ. 1, ձախից 1-ին, 2-րդ):

բ) Փխալաների մյուս տեսակը նորախեցի է, զեպի վեր բարձրացող լայն վզով և կլորացող իրանով: Անցումը զեպի իրանը, նախորդի համեմատությամբ, ավելի սահուն է, կլորացող, շուրթից ցած իրանի վրա ունի նուրբ փոքրված հորիզոնական զծիկ: Արտաքինից ունի զեպնա-կարմրավուն փայլ (աղ. 2, նկ. 1, աջից 1-ին):

Բացի կավամանների այս հիմնական խմբերից հայտնաբերվեցին նաև կավամանների տարբեր մասեր՝ զարդարված ուղեֆ, ներձկված, վերադիր և փայլեցման տեխնիկայով կատարված զարդանախշերով:

Քոսի ճոթերի բնական գույնի վերին կուտուրպան շերտում գտնված խեցեղենի համար բնորոշ են՝ վերադիր կոճակներ, ուղեֆ նեղ զոտիներ՝ հատված շղթայաձև, պարանոձե, բջիջաձև, ատամնաձև, թեք հատիկաձև զարդանախշերով, նաև՝ ռազմաշարք ալիքաձև զոտիներ, ուղեֆ լայն ժապավեններ՝ հատված թեք բջիջներով զծիկներով, խորաքանդակ՝ ժապավեններ, որոնց վրա փայլեցման միջոցով արված են ալիքաձև և զիգզագ զծեր: Կան նաև փայլեցման տեխնիկայով արված անկյուններ և հատող զծեր (աղ. 2, նկ. 2, 3):

Պատահում են իրանի ուսուցիկ մասեր՝ ամբողջությամբ ծածկված զծային հորիզոնական զարդերով: Այս զարդանախշերը տարբեր համադրություններով հանդիպում են կավամանների շուրթի տակ, վզի հիմքում և իրանի ուսուցիկ մասում:

Վերը նկարագրված զարդանախշերը լայն տարածում են ունեցել Հայաստանում 8—6-րդ դդ. մ. թ. ա., Հնդկականում, Գոլոփինոյում, Կարմիր բլուրում, Արինբերդում և այլուր: Օրինակ՝ Եղովինոյի սափորների ուսերին կան խորաքանդակ ժապավեններ՝ փայլեցման տեխնիկայով արված ալիքաձև զոտիներով, խորաքանդակ ալիքաձև զծերի և զիգզագ ժապավենների զուգորդությունը թեք հատիկաձև զարդանախշերի հետ մենք տեսնում ենք Հնդկականի 1952 թ. պեղված դամբարաններից գտնված կավամանների վրա (ՊՊՔ, 2086/58 և 2088/54), Կարմիր բլուրի բազալի (2082/17) և միջնաբերդի (1656/5, 1656/29) խեցեղենի վրա, որտեղ հորիզոնական զոտիների հետ հանդիպում են նաև թեք հատիկաձև ակոսներ (2082/7): Բացի այդ, 1960 թ. Ատախտոզական աշխատանքների ժամանակ, նույնատիպ խեցեղենի բեկորներ հավաքեցին Թագավորանիստից և Ոսկեվազի ամրոցից:

2. Ա. Մարտիրոսյանը, տարբերելով ուրարտականից, այս խեցեղենը համարում է տեղական և թվագրում 8—6-րդ դդ. մ. թ. ա.:

Քոսի ճոթերի վերին շերտի խեցեղենն է հիշեցնում նաև Վրաստանում Սամթավրոյի շրջանի ներքին Գոմի՝ Աքեմենյան և վաղ հելլենիստական էպոխայի խեցեղենը (թեք հատիկաձև ակոսներ, հորիզոնական զծերով ծածկված կավամանների բեկորներ, ուղեֆ զոտիներ հատված հատիկաձև զարդանախշերով կամ մանր վերադիր կոճակներ և այլն), սակայն ներքին Գոմի խեցեղենը ունի նաև տեղային առանձնահատկություններ, որով տարբերվում է Հայաստանի խեցեղենից թե՛ ձևով և թե՛ զարդանախշերի որոշ մանրամասներով (վերադիր դրաներ, շրջաններ, սպիրալներ և տարբեր երկրաչափական ձևեր):


Մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև Քոսի ճոթերում գտնված կավամանների կանթերը (մոխրագույն, սև, կարմիր և գեղին), որոնք հիմնականում երեք տիպի են՝ աղեղնաձև կլոր, սեղանաձև և ժապավենաձև:

¹ А. А. Мартиросян, Раскопки в Головинно, Ереван, 1954, табл. XI.

² А. А. Мартиросян, К характеристике города Тейшебаини, Ереван, 1957, стр. 91.

³ Б. А. Куфтин, Материалы к археологии Колхиды, т. II, стр. 68—70, 80, табл. 26, 27.

Աղյուսակ 1



Նկ. 1-3



74. 1-3

Աղեղնաձև կլոր կանթերի մեջ կան որոշ նրբին տարրերություններ, նրանց մի մասը վերևում ունի ելուստներ, իսկ մյուսներն՝ առանց ելուստների են: Բոլորի համար ընդհանուրն այն է, որ արտաքինից ունեն խորը ակոս, որը տարրեր ձևերի է՝ զծային խոր, կիսալուսնաձև ներճկված, թեք ակոսների շարքեր, պարանաձև ոլորված, նշաձև երկարավուն ձգված և այլն: Կան կանթեր, որ վերևի մասում շուրթին միանալու տեղում առաջացնում են եռանկյունաձև հրապարակ՝ եղբրված երկու նշաձև երկարավուն ակոսներով, որոնք անկյուններում զարդարված են 3-ական կամ 2-ական կոճակաձև վերադիրներով: Այդ նույն վերադիր կոճակներին մենք հանդիպում ենք ինչպես մի բեկորի վրա, կանթի հիմքով, որից սկիզբ է առնում եղևնաձև զատավորությամբ թեք հատիկաձև ակոսների զոտին, այնպես էլ տարրեր կավամանների իրանի ուռուցիկ մասերում:

Աղեղնաձև կլոր կանթերը պատկանում են ուռուցիկ իրանով, ոչ շատ բարձր նեղ վզով և տափակ հատակով կավամաններին, որոնց ուսերը զարդարված են լինում խորաքանդակ ժապավեններով, վրան փայլեցման եղանակով արված ալիքաձև զոտիներ: Այս տիպի կավամանների և կանթերի մենք հանդիպում ենք լենինականի դամբարաններում (ՊՊԹ, № 2088/42 կանթի տեղում, վրան մանր վերադիր կոճակներ), Գոլովինոյի դամբարաններում⁴, Կարմիր բլուրի և՛ քաղաքում (ՊՊԹ, № 2088/42 կանթի ակոսի վրա աստիճանաձև փորվածքներ) և՛ միջնաբերդում (ՊՊԹ, № 2050/112, 1705/31): Նույնը մենք տեսնում ենք նաև Իջևանի դամբարաններից գտնված կավամանների վրա: Վերևում ելուստով, ակոսի վրա կիսալուսնաձև փորվածքներով կանթ գտնվել է նոր Բայազետի ցիկլոպյան ամրոցում:

Վերջապես որոշ անալոգիաներ կարելի է անել նաև վերը հիշատակված փիալաների համար: 1-ին տիպի փիալաներից գտնվել են լենինականի դամբարաններում (ՊՊԹ, № 2088/15), Կարմիր բլուրի միջնաբերդում, Արինբերդում և այլն: 2-րդ տիպի փիալաներից գտնվել են նոր Բայազետի ցիկլոպյան ամրոցում, Կարմիր բլուրի 5-րդ դ. մ. թ. ա. № 3 դամբարանում⁵, Ցամաքաբերդի դամբարանում (ՊՊԹ, № 1992/14): Նույնատիպ փիալաներ գտնվել են Գյանջայում 1903 թ. Գ. Օ. Ռուկենդորֆի⁶ և 1905 թ. Սկինդերի⁷ կողմից պեղված հում աղյուսե դամբարանում, նաև Թրիալեթում Բեշտաշենի մոտ վաղ Աքեմենյան ժամանակաշրջանի դամբարաններում, որը Կուֆտինը թվագրում է 6—5-րդ դդ. մ. թ. ա.⁸:

Քոսի ճոթերի բնակատեղիի 1-ին կուլտուրական շերտում գտնված 2-րդ տիպի փիալաներն են հիշեցնում Ռիոնի զաշտավայրում Դարլա-Դոմիում Կոլխիդյան դրամների գանձի հետ գտնված արծաթե թասը⁹, Ալգետի հովտի դամբարաններից գտնված ապակե փիալան: Նույնատիպ լրոնդե փիալաներ գտնվել են Դեմեկ էյուկում¹⁰, իսկ արծաթե՝ Ռաս-Շամրայի¹² երկաթի կուլտուրայի 7—6-րդ դդ. մ. թ. ա. դամբարաններում:

Այսպիսով, Քոսի ճոթերի բնակատեղիի 1-ին կուլտուրական շերտի խնցեղներ կարելի է վերագրել 8—5-րդ դդ. մ. թ. ա., որն ունենալով իր տեղային առանձնահատկությունները, ունի անալոգիաներ ինչպես ամբողջ Անդրկովկասում, այնպես էլ հին Արևելքում: Այդ խնցեղներ վերաբերվում է պատմական զարգացման մի ժամանակաշրջանի, երբ կուլտուրական ընդհանրություններ գոյացել էին կազմավորվող հայ ժողովրդի ապրած ընդարձակ տերիտորիաների վրա, իսկ կուլտուրական կապերը տարածվում էին ավելի հեռուներ:

⁴ А. А. Мартиросян, Раскопки в Головино, Ереван, 1954, табл. XII. А. О. Мнацаканян, О раскопках могильников у села Головино (Армения), Ереван, 1952, стр. 66, рис. 13.

⁵ А. А. Мартиросян, Город Тейшебани, Ереван, 1961, стр. 144, рис. 68.

⁶ Б. Г. О. Розендорф, Раскопки Г. О. Розендорфа, ОАК, 1903, стр. 92—98.

⁷ К. В. Тревер, «Очерки по истории и культуре Кавказской Албании, 1959 г., стр. 163, рис. 13. Известия Императорской Археологической Комиссии, вып. 29, 1909, стр. 6, 15, рис. 13.


⁸ Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, Тбилиси, 1941 г., стр. 42, табл. IV.

⁹ Там же, стр. 46, рис. 44.

¹⁰ Там же, стр. 46, 249, табл. VIII.

¹¹ O. M. Dalton. The treasure of the Oxus with other examples of early oriental metalwork, London, 1926, табл. XXIII, № 180, стр. 44.

¹² Schaefer Claude F. A. Les fouilles de Ras Shamra Igarit, Suria, XVI, Paris. 1935, стр. 150, рис. 7.



* * *

Գետնի մակերեսից մոտ 2 մ խորությամբ վրա սկսվեց երկրորդ կուլտուրական շերտը, որն էնեոլիթյան էպոխային վերաբերվող շափաղանց հետաքրքիր նյութեր տվեց:

Այս շերտում հայտնաբերվեցին կլոր կացարանի քարե հիմքերը՝ մոտ 1 մ բարձրությամբ և 0,45 մ հաստությամբ, որոնք կառուցված են վեց շաբաք բրար վրա շոր շարված միջին մեծությամբ անմշակ քարերով: Պատի արտաքին երեսին մոտ 2—3 սմ հաստությամբ պահպանվել են կավե սվաղի հետքեր: Կավե հատակը 6—10 սմ հաստությամբ, շինված է նարնջագույն քարի և ավաղի բավական ամուր բնական խտնույթ ունեցող մուշկ հողի վրա: Ետնին ժողոված էին փայտի և հյուսածո եղեգնի բազմաթիվ ալյուրված կտորներ, որոնք հավանաբար ժամանակին կազմել են կացարանի ծածկը: Կավե հատակի վրա գտնվեցին նաև կենդանիների ոսկորներ, քարե և ոսկրե աշխատանքային գործիքներ, գարդիկ, նաև Քուռ-արաքսյան էնեոլիթին բնորոշ խեղեղենի բեկորներ՝ սև և կարմիր փայլեցրած մակերեսով, երկրաչափական բուսական զարդանախշերով և կլոր կանթներով:

Այսպիսով, պեղվեց կլոր կացարանի միայն դրսի կողմը, մոտ 3 մ երկարությամբ: Նյութական միջոցների սպառվելու պատճառով հնարավորություն չեղավ պեղել կացարանի ներսը:

Նման հատկանիշներով կլոր կացարանները բնորոշ են ինչպես Անդրկովկասի, այնպես էլ մի շարք այլ հնագույն հուշարձաններին:

Պեղման ընթացքում էնեոլիթյան մշակույթին բնորոշ նյութեր հայտնաբերվեցին նաև հատակի կենտրոնում բացված էլիպսաձև փոսում (երկարությամբ մոտ 2 մ, լայնությամբ 1,5 մ, խորությամբ 60 սմ), որոնք հնարավորություն են տալիս գատնություններ անելու այս հնագույն բնակատեղիի տնտեսության և կուլտուրայի մասին:

Փոսը լիքն էր մոխրով, որի մեջ գտնվեցին աղորիքների բեկորներ, թեղիկի գլուխ՝ ոսկրեց, մանգաղի ներդիր՝ վարդագույն կալծքարից, փոքրիկ տուֆե անիվ, վարազի ծանիք և կերամիկայի բեկորներ: Այս փոսը կարող էր տարբեր նպատակների ծառայել՝ որպես պահեստ, մոխիր և խոհանոցային մնացորդներ պատրաստելու տեղ և այլն:

Կավե հատակի հյուսիս-արևելյան անկյունում, կլոր կացարանի պատից ոչ հեռու բացվեց չորս բարիք բաղկացած, քառանկյունաձև դասավորությամբ մի օջախ, որի քարերից մեկը մշակված էր գոգավորությամբ (հավանաբար քարե սանդի մաս): Օջախից ոչ հեռու գտնվեցին եղջերուների չորս եղջյուրներ՝ կիսալրված վիճակում, նաև եղջերուների մատների ոսկորներ անցքերով:

Բնակատեղիում գտնվեց նաև թրծած կավից պատրաստված, Շենդակիթի տիպի կլոր օջախի երկու բեկոր (պահպանված մասի տրամագիծը 16 սմ, շուրթի տր. 9 սմ): Օջախի վերին հարթ մակերեսի եզրերը զլարդարված են հատած եռանկյունիների զծային ծալումներով: Պատերը հաստ են, հատակը տափակ: Նրանք ծառայել են կուլտային արարողությունների ու կենցաղային նպատակների համար և հատկապես տարածված են եղել Անդրկովկասի հնագույն երկրադորձական-անասնապահական ցեղերի կենցաղում:

Ուշագործյան արժանի են նաև Քոսի ճոթի բնակատեղիում պեղվող՝ հրապարակից մի քանի մետր բարձր, առօրե երկու եզրին բացված կլոր հատակազմով, կոնաձև կտրվածքով կառուցվածքները, որոնք փորված են բնական, նարնջագույն քարքարոտ, ավաղախտոն շերտի մեջ (մոտ 70 սմ բարձրությամբ վերին մասի տրամագիծը 80 սմ, իսկ հատակի տրամագիծը 1,1 մ): Պատերն ունեն կավե սվաղ: Այս կոնաձև փոսերը լցված էին՝ ալյուրված, շեկ գույնի հողով և փայտի ածուխով: Դժվար է որոշել նրանց ինչ լինելը, սակայն կարելի է ենթադրել, որ նրանք կամ վառարաններ են (գուցե բրուտագործության համար), կամ թոնիքի նախատիպերը:

Նման թոնիք-վառարանների հանդիպում են նաև Հյուսիսային Կովկասում Գոլինսկի¹³ և Լուդովոյի¹⁴ բնակատեղիներում: Սակայն հետաքրքրականն այն է, որ Քոսի ճոթերում այս կառուցվածքները գտնվեցին ոչ թե կուլտուրական շերտում, այլ բարձունքի բնական շերտում, որտեղ բնակության և ոչ մի հետք չկար: Այս հանգամանքը ենթադրել է տալիս, որ Քոսի ճոթերի էնեոլիթյան բնակիչները նման վառարան-թոնիքներ կառուցել են նաև բնակարաններից դուրս:

Այսպիսով, բնակատեղիի ստորին շերտի նյութերը, պեղման հրապարակի փոքրությամբ հետևանքով, չնայած հնարավորություն չեն տալիս կառուցողական ձևերի և նյութական այլ

¹³ А. П. Круглов и Г. В. Подгаецкий, Долинское поселение у г. Пальника, МИА, № 3, М—Л., 1941, стр. 153, рис. 6, стр. 154, рис. 7, стр. 171.

¹⁴ Р. М. Мунчаев, Древнейшая культура Северо-Восточного Кавказа, МИА, № 100, М., 1961, стр. 42.

մնացորդների վերաբերյալ լրիվ պարզ պատկերացում կազմել, սակայն վերը նշված իրենց բոլոր հատկանիշներով կապվում են ինչպես Քուռ-արաքսյան հուշարձանների, այնպես էլ Հյուսիսային Կովկասի և Առաջավոր Ասիայի էնեոլիթյան կուլտուրայի հետ:

Բնակատեղիի ստորին շերտի նյութերի մեջ մեծ տեղ են զբաղում աշխատանքային գործիքներն ու բարձրարժեք խեցեղենը:

Հայտնաբերված աշխատանքային գործիքներից են՝ աղորիքների բեկորները, մանգաղի ներդիրը, տրորիչները, սանդակոթները, եղջյուրե գործիքները և ոսկրե թելիկի գլուխը:

Աղորիքների վեց բեկորներից երկուսը մակույված են, իսկ չորսը երկարավուն էլիպսաձև: Աղորիքների առատությունը Քուսի ճոթերում, ինչպես նաև ամբողջ Անդրկովկասի և Կովկասի բնակավայրերում վկայում են էնեոլիթյան ժամանակաշրջանում հացահատիկային մշակույթի ինտենսիվ զարգացման մասին:

Բացի աղորիքներից, երկրագործական մթերքների մշակմանն են ծառայել նաև տրորիչներն ու սանդակոթները:

Քուսի ճոթերում գտնված տրորիչը փոքր է, կարճ խորանարդաձև, կլորացրած բանուկ մասով (աղ. 3-րդ, նկ. 2, ներքին շարք, աջից 1-ր): Տրորիչներ գտնվել են էնեոլիթյան բոլոր հնավայրերում և շարունակել են իրենց զոյությունը նաև հաջորդ Լպոխաններում, ոչնչով չտարբերվելով նախորդներից:

Հայտնաբերվել են նաև երկու սանդակոթներ (աղ. 3, նկ. 2, ձախից երկու շարքերի 1-ները): Երկրագործության առկայությունն են վկայում նաև նշված ժամանակաշրջանի բնակավայրերում հաճախակի հանդիպող մանգաղի քարե ներդիրները, որոնք ծառայել են որպես բերքահավաքի գործիքներ:

Ինչպես վերը նշվեց, վարդագույն կաթնաքարից մի այսպիսի երկարավուն սեղանաձև ներդիր մաս գտնվել է Քուսի ճոթերի ստորին շերտում (աղ. 3, նկ. 3, ձախից 3-ր): Այն մշակված է բոլոր կողմերից, ունի երկկողմանի ուսույշ: Պահպանված մասի երկարությունը 3,2 սմ է, լայնքը՝ 2,8 սմ: Նույնատիպ մանգաղի ներդիրներ, մեծ քանակությամբ գտնվել են համարյա բոլոր էնեոլիթյան հուշարձաններում:

Մեծ հետաքրքրություն են առաջացնում հատկապես եղջյուրե երկու եղջյուրները, որոնց ծայրերը բավական աշխատեցված են և օգտագործելու հետևանքով մաշվել, սրվել և նրբացել են (աղ. 3, նկ. 1): Հավանաբար զրանք նույնպես օգտագործվել են, որպես երկրագործական գործիք՝ հողը փորելու, փափկացնելու, արմատիքներ հանելու համար:

Ջուհակագործության զոյության մասին է վկայում ոսկրե թելիկի գլուխը (աղ. 3, նկ. 3, ձախից 2-ր), որը պատրաստված է կենդանու ոտքի խնձորակից (տրամագիծը 4,5 սմ, բարձր. 2,5 սմ), կիսաղեղաձև է, մակերեսը հարթ: Նման թելիկի գլուխներ գտնվել են Շենգավիթում (ՊՊԹ, № 1330/210 և քարից 1330/185) Գառնիում (ՊՊԹ, № 1965/5, № 2176/21, 35) բնիկաներում և Անդրկովկասի այլ հուշարձաններում:

Այսպիսով, Քուսի ճոթերի վերը նկարագրված քարե և ոսկրե աշխատանքային գործիքների կոմպլեքսը բավական բնորոշ է էնեոլիթյան Լպոխայի վաղ երկրագործական կուլտուրաների համար:


Օստիոլոգիական նյութի ուսումնասիրությունից պարզվեց¹⁵, որ այստեղի բնակիչները զրադվել են նաև անասնապահությամբ, ունեցել են բնօտանի կենդանիներ: Պեղումների բնթացքում գտնվեցին եղան, ձիու, խոզի և գոմեշի ոսկորներ: Հայտնաբերվել են նաև ազնիվ եղջերուի, վայրի այծի, կիսաբաբի ոսկորներ, որոնք ապացուցում են, որ նրանք զրադվել են որսորդությամբ:

Գեոմորֆոլոգիայի աշխատանքները և մեր պեղումների նյութերը¹⁶ ցույց են տալիս, որ բնակատեղիի շրջակայքը ծածկված է եղել լայնատերև անտառներով, որը որսի լայն ասպարեղ կտար Քուսի ճոթերի էնեոլիթյան բնակիչներին: Փանի որ բնակատեղին երկու կողմից շրջապատված է եղել գետակներով, պարզ է, որ նրանք զրադվել են նաև ձկնորսությամբ:

Քուսի ճոթերի բնակատեղիում գտնված միակ զենքը՝ դա քարե գնդաձև գուրգի բեկորն է, որը պատրաստված է ամուր, բաց գույնի քարից (աղ. 3, նկ. 2, ներքին շարք, ձախից 2-ր): Այն զայլիկոնած է երկու կողմից այնպես, որ կենտրոնից անցնող անցքը վերնում լայն է, իսկ միջին մասում նեղանում է: Նույնատիպ, բայց անավարտ գուրգի մասեր գտնվել են Շենգավիթում:

¹⁵ Օստիոլոգիական նյութի ուսումնասիրությունը կատարել է Կենդանաբանություն ինստիտուտի աշխատակից Ս. Մեժլումյանը:

¹⁶ Փայտի ուսումնասիրությունը կատարել է Լ. Փալանջյանը:



(ՊՊՔ, № 1330/3, 9, 384, 389), նախիջևանի Քյուլ-Թեփեյում¹⁷, որպեսի հանգամանքն ապացուցում է տեղում պատրաստված լինելը: Ամբողջական գուրգեր մեղ մոտ գտնվել են էջմիածնի շրջանի հնագույն հուշարձաններում (ՊՊՔ, № 776/169, 7, № 777/20): Գուրգը հնագույն զենքի լիմնական տեսակներից մեկն է: Այն գոյություն է ունեցել բավական երկար ժամանակ և տարածված է եղել բազմաթիվ երկրներում, սկսած դեռևս նեոլիթից:

Քոսի ճոթերի էնեոլիթյան ընկերները կրել են նաև դարդեր, ինչպես վերը նշվեց՝ քարերով շարված քառանկյունաձև օջախից ոչ հեռու, հատակի վրա փռված էին կիսաշրված վիճակում մեծ քանակությամբ եղջերուի մատի ոսկորներ, որոնց մեծ մասը մշակված էր (աղ. 3, նկ. 1): Ամենայն հավանականությամբ նրանք օգտագործվել են որպես զարդարանքներ վզից կախելու կամ հագուստի կտրծքը և թևերը զարդարելու համար: Նման զարդարանքներ գտնվել են նաև Գառնիի էնեոլիթյան շերտից (1961 թ. պեղումներ № 114), Էլարում (ՊՊՔ, № 127/141), Սյունիում (Մ. Հասրաթյանի պեղումները) Գեոյ-Թեփեյում¹⁸: Բացի այդ գտնվել են նաև երեք կոճակներ՝ մեծ (տր. 3,6 սմ), փոքր (տր. 2 սմ) և երրորդը անավարտ (աղ. 3, նկ. 3, աշխ. երևեր):

Ըստ ազգագրական տվյալների (որը մինչև հիմա էլ պահպանվել է), այն կախում են երևեսաների վզից, կարում շորից, որպեսզի շար աչքը շրոնի, շարը խափանվի: Այն կախում են նաև կենդանիների վզից:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև կավե շրջանակները, որոնցից տասը հատ գտնվել են Քոսի ճոթեր ընկատեղիում: Նրանք պատրաստված են կավամանների թեկորներից և այդ պատճառով մեկ կողմից ուռուցիկ են, իսկ մյուս կողմից ներնկված: Եզրերը հարթեցված են կոպիտ կերպով:

Կավե շրջանակները չափազանց ընդունել են Քուլ-արաքսյան էնեոլիթյան կուլտուրայի հուշարձանների համար: Մեծ քանակությամբ գտնվել են Շենգավիթում, Գառնիում, Դվինում, Էլարում, Ղազախի Աղստաֆա-Չայ ընկատեղիում¹⁹, նախիջևանի Քյուլ-Թեփեյում²⁰: Նրանք հանդիպում են նաև Լուգովոյի ընկատեղիում²¹, Լուկի Վրուբլևեցկայայում²² և այլուր:

Կավե շրջանակների դերի վերաբերյալ հնագիտական գրականության մեջ տարբեր կարծիքներ կան: Եվ. Բայրուրյանը գտնում է, որ նրանք օգտագործվել են որպես կենդանիների վզից կախելու հմայիլ, երևեսաների խաղալիքներ, թեղիկի գլուխներ, սակայն նկատի ունենալով նրանց առատությունը և մշակման կոպտությունը, կասկածում է նրանց թեղիկի գլուխ լինելը²³: Ս. Ն. Բիրիկովը անհավանական է համարում նրանց պրակտիկ նպատակներով օգտագործելը և ենթադրում է, որ դրանք օգտագործվել են որպես խաղանիշ²⁴, նույն կարծիքին է նաև Ռ. Մ. Մունչանը²⁵:

Այն հանգամանքը, որ կավե շրջանակները մեծ քանակությամբ են գտնվում մեր էնեոլիթյան հուշարձաններում և բացի այդ փոքր մասն է, որ անցք ունի, թույլ է տալիս ենթադրելու, որ մեծ մասամբ նրանք օգտագործվել են որպես խաղանիշ կամ խաղալիք և զուցե մասամբ օգտագործվել են որպես հմայիլ (թալիսման), կենդանիների վզից կախելու համար:

Քոսի ճոթերի ոտորին շերտի պեղումների ժամանակ հայտնաբերվեցին նաև երկու քարե անիվներ: Երկուսն էլ սկավառակաձև են, պատրաստված սև տուֆից (մեծի տր. 14 սմ, փոքրի տր. 8,5 սմ): Մեծ անիվի անցքը թեք անկյունով ընկած է, օգտագործման հետևանքով (աղ. 3, նկ. 2, վերին շարք): Ամենայն հավանականությամբ նրանք ծառայել են որպես մանկական սայլերի անիվներ (մեծ անիվը կարող էր և ձկնորսական սուզանիվ ծառայել): Քարե անիվներ գտնվել են նաև Շենգավիթում (ՊՊՔ, № 1449/63), Մոխանաթ-Թափայում (№ 185/36),

¹⁷ О. А. Абибуллаев, Раскопки холма Кюль-Тепе близ Нахичевани в 1955 г., МИА, № 67, 1959 г., стр. 56, рис. 7.

¹⁸ T. Burton-Brown, Excavations in Azerbaijan, 1948, London, 1951, pl. V. fig. 1300—1302.

¹⁹ Նյութերը Բաքվի Պատմության ինստիտուտում:

²⁰ О. А. Абибуллаев, Археологические раскопки в Кюль-Тепе, табл. 34.

²¹ Р. М. Муичаев, Древнейшая культура Северо-Восточного Кавказа, стр. 120.

²² С. Н. Бибиков, Поселение Лука-Врублевская, МИА СССР, № 38, 1953. М., стр. 201.

²³ Ե. Բայրուրյան, Աղխատանքային գործիքները հին Հայաստանում, էջ 201:

²⁴ Ս. Ն. Բիրիկով, Նույն տեղում, էջ 201:

²⁵ Ռ. Մ. Մունչան, Նույն տեղում, էջ 120:

սակայն Անդրկովկասի Հնեոլիթյան հուշարձաններում տվելի շատ տարածված են սայլերի մոդելների կավե անիվները:

Այսպիսով, քարե և կավե մանկական սայլերի անիվների լայն տարածումը, հատկապես Անդրկովկասում և Հին Արևելքի Հնեոլիթյան հուշարձաններում, պատահականություն չէ և ապացուցում է նշած ժամանակաշրջանում մասսիվ փայտե անիվներով ծանր սայլերի գոյությունը: Նման սայլերի գոյության վառ ապացույցն են հանդիսանում, մի փոքր ավելի ուշ շրջանի, մոտավորապես 2-րդ հազարամյակի երկրորդ կեսի մ. թ. ա. պեղումների ընթացքում հայտնաբերված մասսիվ փայտե անիվներով սայլերը՝ Լճաշենի կուրգաններից²⁶, Մարտունու շրջանի նոր Գետաշենի (Նախկին Ադիաման)²⁷, Թրիալեթի կուրգանից²⁸, նաև Ուրի թագավորական դամբարաններից²⁹:

Սակայն Քոսի ճոթեր բնակատեղիի ստորին շերտի կոմպլեքսի ամենաբնորոշ գիծը, դա բարձրորակ և բարձրարվեստ խեցեղենի բազմազանությունն է, որն արտահայտվում է ձևերի յուրօրինակությամբ, զարդանախշերի հարստությամբ և կատարման բարձր տեխնիկայով:

Կերամիկան՝ բոս ձևի կարելի է լրացնել հետևյալ խմբերի.

1. Գավաթներ եռմասանի. գլանաձև, ուղղահայաց, մի փոքր ներճկված վզով, կլոր, ուռուցիկ իրանի միջին մասով, կոնաձև, նեղացող ներքնամասով և շատ փոքր ներճկված, կլոր հատակով (ադ. 4, նկ. 1, 2): Վզի խմբում նեղ ժապավենով երկրաչափական և իրանի ուռուցիկ մասում, միայն մեկ երեսից ռելիեֆ-ներճկված զարդանախշերով: Ունեն՝ կարմիր, սև և դեղնակարմրագույն փայլեցրած մակերես: Նման գավաթների 10 բեկոր է գտնվել:

2. Բարձր, ուռուցիկ ուսերով, ղեպի ներս թևը անկյունով կտրված շուրթերով անփիղ կալվամանների մասեր, ուսերին լայն ակոսով կատարված բուսական, սպիրալաձև և շրջանաձև զարդանախշեր (ադ. 5, նկ. 1):

3. Քառանկյունաձև մեծ և փոքր բաժակների մասեր, տափակ հատակով և ուղղահայաց պատերով: Շուրթն արտաքինից մի փոքր ռելիեֆ և ավարտվում է ուղիղ կամ թևը անկյունով: Զարդարված են ռելիեֆ-ներճկված զարդանախշերով (ադ. 5, նկ. 2):

4. Գլանաձև իրանով (բանկայաձև) կավամանների բեկորներ, հաստախեցի, մի փոքր ռելիեֆ, լայն ժապավենաձև շուրթով:

5. Թասերի մասեր զարդարուն և անզարդ: Սրանք երկու տիպի են. կարճ թույլ ներճկված վզով և անփիղ, շուրթը նուրբ և մի փոքր դուրս ճկված (ադ. 5, նկ. 3, 5):

6. Շեփորաձև բացվածքով կավամանների մասեր, շուրթը տափակ, ուղիղ կտրված կետագծային և ռելիեֆ-ներճկված զարդանախշերով:

7. Մեծ, լայնարևրան ուռուցիկ փորով կավամանի մաս: Թև՝ ձևով և թև՝ զարդանախշերով ու կատարման տեխնիկայով կրկնում է 1-ին խմբի գավաթներին, միայն ծավալով, նրանցից շատ մեծ է (ադ. 6, նկ. 2):

8. Կավաման լայնարևրան գլանաձև վզով, ուռուցիկ փորով և տափակ լայն մի փոքր ներճկված հատակով, անզարդ (ադ. 6, նկ. 1):

Բացի խեցեղենի այս ութ խմբից, մենք ունենք բեկորներ, որոնց միջոցով դժվար է վերականգնել կավամանի ձևը: Կան մեծ կավամանների մասեր զարդարված ռելիեֆ բազմազարդ մեծ սպիրալներով (ադ. 6, նկ. 3), ռելիեֆ-ներճկված լայն ակոսով կատարված ժապավեններ՝ հատիկաձև փոսիկներով (№ 2127:11), անկյուններ, սպիրալային վերջավորություններով բարդ կոմպոզիցիաներ (№ 2127:19, 10, 33, 24) (ադ. 5, նկ. 6), երկրաչափական զարդանախշերի լայն ժապավեններ (№ 9—19) և զրոշմազարդ մեծ կավամանների մասեր անկյունաձև, ալիքաձև և բազմազարդ քառանկյունիների զարդանախշերով (№ 7), որը չափազանց յուրօրինակ է թև՝ զարդանախշերով և թև՝ կատարման տեխնիկայով (ադ. 6, նկ. 4):


²⁶ А. О. Минаканян, Раскопки курганов на побережье оз. Севан, СА, 1957, № 2, стр. 146—153. Նույնի Древние повозки из курганов бронзового века на побережье оз. Севан. СА, 1960, № 2, стр. 139—152.

²⁷ Է. Լալայան, Դամբարանների պեղումները Մոհրհրդային Հայաստանում, Իրեան, 1931 թ., էջ 192—196.

²⁸ Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, стр. 97, рис. 102. О. М. Джапаридзе, Археологические раскопки в Триалети в 1957—1958 гг. Тб. 1960, стр. 40.

²⁹ Woolley C. Leonard, The royal cemetery (Ur excavations, vol. 11), New York, 1934, pp. 64, 108—109.

Աղյուսակ 4



Նկ. 1-2

Կան նաև մեծ և փոքր կազմամասնների մասեր, որոնց վզերը ևս զարդարված են ուլիկ-ներճկված զարդանախշերով (№ 2127:7, 8, 38 № 6): Սրանց մեջ բավական յուրօրինակ է 2127:7-ը, այստեղ ակնոցաձև երկու սպիրալները վերևից միանում են իրար նետասլաքի ձևի զարդանախշով, որը ծածկված է 3 մեծ փոսիկներով (աղ. 5, նկ. 7): Այս զարդանախշը դեռևս իր անալոգիաները չունի Անդրկովկասի մյուս էնեոլիթյան հուշարձաններում:

Քոսի ճոթերի կերամիկայի համար բնորոշ են նաև կանթերը, որոնք ըստ ձևի բաժանվում են չորս խմբի՝ կլոր, ձվաձև, ելուստաձև և եռանկյունաձև հրապարակով: Կլոր և ձվաձև կանթերը ևս երկու տիպի են՝ խողովակաձև անցքով և խուլ, առանց անցքի (բայց անցքի փոխարեն ներ-ճկված փոսիկներ): Կան և՛ մեծ և՛ չափազանց փոքր միևնույն տիպի կանթեր:

Քոսի ճոթերի կոմպլեքսին բնորոշ են նաև սև, գորշագույն, շագանակագույն, փայլեց-րած մակերևույթով, վարդագույն և գորշ աստաղով սկավառակաձև կափարիչների թեկոները: Նման կափարիչները հայտնաբերվել են Անդրկովկասի էնեոլիթյան համարյա բոլոր հուշարձաննե-րում և հատկանշական են Քուռ-արաքսյան էնեոլիթյան կուլտուրայի համար:

Այսպիսով Քոսի ճոթերի բնակատեղիի կերամիկայի համար ընդհանուրն այն է. որ նրանք պատրաստված են ձևերով, լավ հունցած, մշակված սև, մոխրագույն և կարմիր կավից: Մեծ մասը և արտաքինից և ներսից ծածկված են սև, կարմիր, մոխրագույն և դեղնագույն անդրով:

Ունեն ուժեղ փայլ, լավ հարթեցված ու թրծված են:

Այս խեցեղենի բնորոշ հատկանիշներն են.

1. Գծային, ուլիկ-ներճկված, ուլիկ զարդանախշեր, որոնք կատարվել են դեղ շթած, թույլ կավի վրա սեղմելու և կտրելու եղանակով:

2. Ուլիկ-ներճկված զարդանախշերը բացառապես կատարված են սեղմելու եղանակով, իսկ գծայինները և սեղմելու, և կտրելու: Կտրելու եղանակով կատարվածների մի մասը բավա-կանին կոպիտ, անփուլթ է կատարված և չի համապատասխանում իրանի ուռուցիկ մասում այն-քան բարձրարվեստ և նուրբ զարդանախշերի ոճին:

3. Առաջին խմբին պատկանող կերամիկային բնորոշ է ուղղադիմ` գծային զարդանախշերի նեղ դոտի միայն վզի հիմքում և իրանի ուռուցիկ մասում ուլիկ-ներճկված, նեղ ակոսով կա-տարված զարդանախշ: Մյուս խմբերի կազմամասների տարրեր մասերն են զարդանախշված վզի ներճկված մասերը, թասերի և բաժակների շուրթերը և այլն:

4. Կազմամասների ուռուցիկ իրանը զարդանախշված է միայն մեկ երեսից և ոչ թե ամբողջ մակերեսը:

5. Գծային և կետգծային զարդանախշերը իրենց բնույթով երկրաչափական են: Նրանց սիր-ված մոտիվները հռանկյուններն են տարրեր զասավորությամբ, որոնք ամբողջությամբ կամ կեսից ծածկված են գծիկներով: Երբեմն հանդիպում են նաև ջանցապատ կամ զիզզազ ժապավեն-ներ և շիզանկյուններ, մեանդրներ, անկյուններ գծածածկ և կետածածկ:

6. Ուլիկ-ներճկված զարդանախշերի սիրված մոտիվներն են՝ սպիրալ իր բազմաթիվ վա-րիացիաներով, համակենտրոն շրջանակները, բուսական ցողուններն ու տերևները, անկյուններ կազմող ժապավենները և երբեմն էլ հավելյալ սպիրալով բարդացած, խճճված կոմպոզիցիա-ները: Այս օրնամենտալ մոտիվներն անշուշտ իրենց հիմքում պիկտոգրաֆիկ պատկերումներն են, որոնք անճանաչելիության աստիճանի ստիլիզացված են և առայժմ դժվար է վերծանելը:

7. Զարդանախշերում դերիշխողը սպիրալն է, որը հանդես է գալիս ինչպես մեկուսի, առան-ձին, այնպես էլ տարրի կապակցություններով: Կան ակնոցաձև սպիրալներ միացված սլաքաձև զարդանախշերով, կան քառանկյունաձև և հռանկյունաձև պոչիկներով՝ նշաձև կամ էլիպսոսի փոսիկներով ծածկված:


8. Ուլիկ, բարձրաքանդակ զարդանախշերը թվով քիչ են և բաղկացած են առանձին, մեծ, բազմազայն սպիրալներից, քառանկյուններից և ալիքաձև ժապավենների դոտուց:

Քոսի ճոթերի խեցեղենը մեծ անալոգիաներ ունի ինչպես Հայաստանի, այնպես էլ հարևան այլ երկրների էնեոլիթյան մշակույթի հետ:

Նմանությունները մեծ են հատկապես հարևան Թագավորանիստի հետ, որի հետ նա կապ-վում է թե խեցեղենի ձևերով, կատարման տեխնիկայով և թե զարդանախշերի մոտիվներով: Քոսի ճոթերի կերամիկայի առաջին խմբի նման, այստեղ եռմասանի զավթների վզից իրանին անցման մասում ունեն ուղղադիմ երկրաչափական զարդանախշերի նեղ ժապավեն, իսկ իրանի ուռուցիկ մասում ուլիկ-ներճկված, նեղ ակոսով կատարված սպիրալների բարդ կոմպոզիցիա (ՊՊԹ, № 1475/16, 23, 49դ, 2128/2), արտաքինից սև և դարչնագեղնագույն ուժեղ փայլեցրած մակերես:

Այսպիսով, համեմատելով Քոսի ճոթերի և Թագավորանիստի խեցեղենը, մենք գտնում ենք



Աղյուսակ 5



1 2 3 4 5 cm



1 2 3 4 cm



Նկ. 1-7

մեծ նմանություններ և դա պատահական չէ, նրանք պտնվում են իրարից յնդամենը 5—6 կմ հեռավորության վրա և կարող են դիտվել որպես աղբակից տոհմերի (կամ ցեղերի) միեկնույն կուլտուրայի արգասիքը:

Էջմիածնի հուշարձանների խեցեղենի հետ Քոսի ճոթերն ունի ինչպես նմանություններ, այնպես էլ տարբերություններ: Նրանք նման են զարդանախշերի բնույթով, կատարման եղանակով, զավաթների եռամասնիությամբ (ՊՊԹ, № 766:113, № 600, 591):

Քոսի ճոթերի և էջմիածնի խեցեղենի լական տարբերությունն այն է, որ էջմիածնի խեցեղենի վրա ընդհանրապես բացակայում են զծային զարդանախշերը (բայցի էջմիածնի Քյուլթափայում գտնված կավափանի մի թեկորից, որի վզի հիմքում սեղմելու տեխնիկայով երկրաշափական զարդանախշերի մի ժապավեն է զծված: Այդ մասին նշում է Նաև Ի. Ա. Կուֆտինը)³⁰ Անցումը զավաթների վզից դեպի իրանի ուռուցիկ մասը ոչ թե զծային զարդանախշերի ժապավենով է կատարված, ինչպես Քոսի ճոթերում էլ, այլ ուղղակի շորիկոնական ներճկված գոտիով:

Իրանի ուռուցիկ մասում նույնպես ռելիեֆ-ներճկված զարդանախշեր են արված, բայց կատարված են ոչ թե նեղ ակոսով, ինչպես Քոսի ճոթերի խեցեղենի մեծամասնությունը, այլ լայն ակոսով, ավելի ցայտուն և մոնումենտալ են, ավելի պարզեցված: Սպիրալների բարդ կոմպոզիցիայի փոխարեն գերակշռում են համակենտրոն շրջանակների, բուսական մոտիվների և սպիրալների կոմպոզիցիաները:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Շենդավիթի և Քոսի ճոթերի խեցեղենի համեմատությունը: Երկուսին էլ հատուկ է ձևերի բազմազանությունը, զարդանախշերի կատարման տեխնիկայի, մոտիվների, կանթերի ձևերի սկզբառական կափարիչների նմանությունը և այլն:

Ինչպես Քոսի ճոթերում, այնպես էլ Շենդավիթում հանդիպում ենք եռամասնի զավաթների, որոնց իրանի ուռուցիկ մասերը զարդարված են ռելիեֆ-ներճկված սպիրալների կոմպոզիցիայով, իսկ վիզը ուղղաձիգ երկրաշափական (ՊՊԹ, № 1330:17, 32, 37, № 1442:130, 131, № 1618:130ա, 132, 232): Սակայն ուղղաձիգ երկրաշափական զարդանախշերը այստեղ մեծ զարգացում են ստանում և հանդես են գալիս ոչ թե Քոսի ճոթերի նման վզի հիմքում նեղ ժապավենով, այլ լայն կանխին մեծ հրապարակ են զբաղեցնում:

Չնայած Շենդավիթում զծային երկրաշափական զարդանախշերն անհամեմատ ավելի զարգացած են և հարուստ քան Քոսի ճոթերում, այնուամենայնիվ բազմաթիվ դեպքերում նրանց մոտիվները համընկնում են: Նրկուսի համար էլ ընդհանուր են կեսից կամ ամբողջությամբ զրծածածկ եռանկյունիների իրար հաջորդող շարքը (ՊՊԹ, № 2127, 41, № 8, 1618:117) և նրանց բազմաթիվ այլ խմբավորումները, նույնպես մեանդրների և վերից վար իրար կից անկյունների և երկհարկ եռանկյունիների շարքը:

Ընդհանրապես Շենդավիթի խեցեղենն իր մեջ ամփոփելով Անդրկովկասի էնեոլիթյան հուշարձանների խեցեղենի համարյա բոլոր բնորոշ հատկանշական գծերը, միաժամանակ տարբերվում է որոշակի տեղային առանձնահատկություններով:

Քոսի ճոթերի հետ կապվում են նաև Գառնիի և Դվինի էնեոլիթյան շերտի խեցեղենը:

Հատկապես 1961 թ. Գառնիի պեղումներից ձեռք բերված նյութերում մենք հանդիպում ենք Քոսի ճոթերի 1-ին խմբի տիպի զավաթների մասեր, վզի հիմքում զծային զարդանախշերի գոտի, իսկ իրանի ուռուցիկ մասում սպիրալներով ավարտվող բարդ երկրաշափական կոմպոզիցիա (№ 125, 109):

Սակայն Քոսի ճոթերի խեցեղենի անալոգիաները վերը նշածով չեն սահմանափակվում և սերտորեն առնչվում են ամբողջ Հայկական լեռնաշխարհի (այժմ թուրքական տիրույթայում) բազմաթիվ էնեոլիթյան հուշարձանների խեցեղենի հետ, ինչպես օրինակ Իզդիրի հովտի (Արարատի ստորոտում) հուշարձանների, Զալդրանի դաշտավայրի, Էրզրումի շրջակայքի, Ալաշկերտի (Կարադոզ-Ղարաքիլիսա) դաշտի, Նախիջևանի շրջանի և Վանա լճի շրջակայքի հուշարձանների հետ: Հատկապես մեծ է նմանությունը Իզդիրի հովտի հուշարձանների հետ:

Յայցի գյուղում, Իզդիրից արևմուտք հայտնաբերվել են նույնատիպ եռամասնի զավաթների մասեր և խորը թաղարներ զարդարված շեփոններով և համակենտրոն շրջաններով, կատարված ռելիեֆ-ներճկված լայն ակոսով³¹, խեցեղեններից մեկի վրա կրկնվում է Քոսի ճոթերի սպիրալներով ավարտվող բարդ կոմպոզիցիան³²:

³⁰ Б. А. Куфтин, Урартский „колумбарий“... у подошвы Арапата и Куро-Араксский Энеолит. Вестник Гос. Музея Грузии т. XIII В, Тб. 1949. стр. 103, табл. XXIX.

³¹ С. А. Burney, Eastern Anatolia in the chalcolithic and Early Bronze Age. A. S. vol. VIII, 1958, fig. 128, 129, 131.

³² Նույնը, նկ. 130:



նման խեցեղեն հայտնաբերվել է նաև Մալաթիու գյուղի բնակատեղիում, նույնպես Իզմիրի հովտում³³:

Իրենց ձևով ու չափերով մասամբ Քոսի ձոթերի դավաթներն են հիշեցնում Վանա լճի շրջակայքի մի շարք հուշարձաններից հայտնաբերված խեցեղենը: Օրինակ՝ Վանա լճի հյուսիսում Արճեշի³⁴ (էրնիս) դամբարաններից գտնված դավաթները (Իրեմիի բնակատեղիից)³⁵, Վանի ամրոցից հարավ-արևելք գտնված դավաթները և այլն:

Քոսի ձոթերի սպիրալներով ավարտվող բարդ կոմպոզիցիան հիշեցնում է նաև Հաղար-թափայի (Մալաթիայի մոտ) խեցեղենը³⁶. նման ուլեֆ-ներճկված սպիրալներ հանդիպում են նաև Սիրիայի և Պաղեստինի հուշարձանների խեցեղենի վրա³⁷:

Բավականին մոտ անալոգիաներ մենք գտնում ենք նաև Կարադի (էրզրումի մոտ) բնակատեղիի խեցեղենի հետ: Կարադում կան կավամանների մասեր, որոնք վղի հիմքում ունեն դժային երկրաչափական դարդանախշերի ժայլավեն, Քոսի ձոթերի տիպի³⁸:

Ինչպես Քոսի ձոթերի, այնպես էլ Կարադի համար բնորոշ են ուլեֆ-բազմազալար սպիրալները³⁹:

Սակայն Կարադում, ինչպես Քոսի ձոթերում (№ 11) հանդիպում են և այլ վարիանտներ, որտեղ մենք նկատում ենք սպիրալների երկրաչափականացման տենդենց, նույն ուլեֆ-ակնոցաձև սպիրալը ներկայացված է ոչ թե լրիվ կլոր ներճկումներով, այլ քառանկյունուն մոտեցող ներճկումներով⁴⁰, Կարադում մենք հանդիպում ենք նաև ուլեֆ-բազմազալար պոչը քառանկյունիների⁴¹: նման դարդանախշի մի մասը պահպանվել է Քոսի ձոթերի № 7 կավամանի դաճաղարդ բեկորի վրա: Նույնատիպ քառանկյունիների մենք հանդիպում ենք Գառնիի բնակատեղիի ստորին շերտի խեցեղենում (№ 109, 1961 թ. պեղումները), Ամիրանիս Դորա⁴² (Ախյոխայի մոտ) բնակատեղիի խեցեղենում:

Ընդհանրապես ուլեֆ-բազմազալար սպիրալն էնեոլիթյան խեցեղենի դարդանախշերի բնորոշ հատկանիշներից մեկն է:

Այն հանդիպում է ակնոցաձև կրկնակի (զույգ) սպիրալի ձևով բացի վերը նշածներից նաև Ալադազի խեցեղենի դարդանախշերում⁴³, Վրաստանում⁴⁴, Օդնիի (Դունիա) էնեոլիթյան շերտում⁴⁵, Սալկայի շրջանի Կանաչ-թափա կուրդանում⁴⁶, Հյուսիս-արևելյան Կովկասում՝ Կայա-կենտի էնեոլիթյան բնակատեղիում⁴⁷ և Լոգոփոյի բնակատեղիում⁴⁸:

³³ Պ. Ֆ. Պետրովի պեղումները, նյութերը Վրաստանի Պետ. թանգարանում. *Ինվ.* 30—14, հրատարակված են Բ. Ա. Կուֆտին, Урартский колумбаний, стр. 73—81.

³⁴ С. А. Burney, նշված աշխատությունը, *նկ.* 77—84:

³⁵ Նույնը, *նկ.* 130:

³⁶ Նույնը, էջ 201, *նկ.* 77—84:

³⁷ Ruth B. K. Amiran. Connections between Anatolia and Palestine in the Early Bronze Age. Reprinted from the Exploration journal, vol. 2, № 2, 1952, plate 5, *նկ.* 9.

³⁸ H. Z. Koşay, K. Turfan. Erzurum-Karaz kazisi raporu, Belleten, Turk Tarih Kurumu, XXIII, № 91, էջ 406, № 159 a.

³⁹ Նույնը, էջ 390 № 35 a, 391, 392:

⁴⁰ Նույնը, էջ 103 a, 98 a, 130:

⁴¹ Նույնը, էջ 391 a, 170, էջ 404 № 128 a, էջ 403 № 131 a, 139 a.

⁴² Նյութերը Վրաստանի Պետ. թանգարանում:

⁴³ Б. Б. Пиотровский. Археология Закавказья, Л., 1949, стр. 35—36. *Այս կավամանը պահվում է Պետ. իրախոսմունքի № 17/230:*

⁴⁴ Е. П. Пчелина, Археологическая разведка в районе Тriaлетского хребта близ г. Тбилиси, ВГМГ, т. V, 1930, стр. 156—159, рис. 7.

⁴⁵ Б. А. Куфтин, Археологические раскопки 1947 г. в Цалкинском районе. Тб. 1948 г., стр. 30, табл. XXXV, 1948 թ. պեղումներով ձեռք բերած նյութերը Վրաստանի Պետ. թանգ. № 247:

⁴⁶ Նույնը, էջ 25, տախտ. 25-րդ:

⁴⁷ А. И. Круглов, Северовосточный Кавказ во II-I тыс. до н. э. МИА № 68, 1958, стр. 28, рис. 5.

⁴⁸ Е. И. Крупнов, Пикаснийская археологическая экспедиция. КСИИМК, вып. 55, 1954, стр. 99, рис. 5.

Սակայն Քոսի ճոթերի խեցեղենի անալոգիաները վերը նշածով չեն սահմանափակվում: Արտացոլելով տեղի վարպետությունը և ղեղարվեստական տրադիցիաները, այն միաժամանակ սերտորեն առնչվում է Անդրկովկասի էնեոլիթյան այլ հուշարձանների հետ և հնարավորություն է տալիս ի հայտ բերել խեցեղենի ձևերի, կատարման տեխնիկական եղանակների և դարդամոտիվների մեջ եղած ընդհանրությունները:

Քոսի ճոթերի 1-ին խմբի հումասանի դավաթների (վզի հիմքում դծային երկրաչափակալիսկ իսկ իրանի ուռուցիկ մասում ուլնֆ-ներճկված սպիրալների կոմպոզիցիա) անալոգիաները մենտեանում ենք Ղադախի՝ Աղստաֆա-Չայի բնակատեղիում պեղին և սև փայլեցրած մակերեսով խեցեղենում⁴⁹:

Աղստաֆա-Չայի խեցեղենում կան նաև Քոսի ճոթերի 5-րդ խմբի № 2127.36 թասի անալոգիան, վզի հիմքում դծային երկրաչափական զարդանախշերի ժապավեն, ոչ թե կտրելու, այլ սեղմելու տեխնիկայով կատարված, ինչպես Քոսի ճոթերում է:

Հումասանի դավաթներ, նույն զարդանախշերով կարմիր և ղեղնավուն գույնի գտնվել են նաև Քրիլխիսի մոտ՝ Սարուրթալույում⁵⁰:

Թե ձևի, թե ուլնֆ-ներճկված զարդանախշերի մոտիվների և թե ընդհանրապես նրանց կատարման տեխնիկայի տեսակետից Քոսի ճոթերի դավաթներն են հիշեցնում Ե. Լալայանի կողմից 1905 թ. Վրաստանի պետական թանգարանին հանձնված դավաթները, որոնց Բ. Ա. Կուլիտինը համարում է Նախիջևանի Քյուլ-Թեփեյից բերված⁵¹:

Սակայն այս դավաթները իրենց ձևով և զարդանախշերով երբեք չեն կապվում Նախիջևանի Քյուլ-Թեփեյի II շերտի խեցեղենի հետ, որին հատուկ է փոսիկներն ու բշտիկները և որտեղ ուլնֆ-ներճկված և դծային երկրաչափական զարդանախշերը լրիվ բացակայում են:

Քոսի ճոթերի հումասանի դավաթներն արտակարգ համընկնում են նաև Բեշտաշենի ցիկլոպյան ամրոցի ստորին շերտի դավաթների մասերին, վզի հիմքում դծային զարդանախշերի ժապավեն, իսկ իրանի ուռուցիկ մասում նույն սպիրալների կոմպոզիցիան: Այստեղ մենք ունենք նաև կավամանների բեկորներ ուլնֆ-բազմազալար սպիրալների զարդանախշերով⁵²:

Այսպիսով, Քոսի ճոթերի էնեոլիթյան բնակատեղիի կոմպլեքսի ուսումնասիրությունը պարզեց, որ դեռևս 3-րդ հազարամյակում մ. թ. ա. տեղի բնակիչները բնակվել են կլոր կացարաններում, զբաղվել են երկրագործությամբ, անասնապահությամբ, չուլակությամբ և մասամբ նաև սրբորգությամբ: Մեծ ծավալով զարդացրել են բրուտագործությունը, որը զարմանք է պատճառում արտակարգ ղեղեցիկ զարդանախշերով, կատարման բարձր տեխնիկայով, ձևերի բազմազանությամբ և կատարելությամբ:

Կասկածից վեր է, որ այդ վաղ երկրագործական անասնապահական կուլտուրան զբաղեցրել է ընդարձակ տերիտորիա: Ընդգրկելով ամբողջ Հայկական լեռնաշխարհը, Անդրկովկասը, նրա սահմանները հյուսիսում հասնում են մինչև հարավային Օսեթիա, իսկ նրա էլեմենտները թափանցում են մինչև Մուծիլի գյուղը (Չիկվիլի), հարավում ընգրկելով Վանա լճի շրջակայքը: Հասնում են մինչև Գեոյ-Թեփե (Ուրմիո) լիճը, հյուսիս-արևմուտքում ընդգրկում է Նոգայի շրջանը (Կարադ), իսկ էլեմենտները հասնում են մինչև Սվազ (Ջարա և Խաֆիկ) և Սալաթիա (Արդահան և Հեթիմխան), հարավ-արևմուտքում նրա էլեմենտները թափանցել են բավականին հեռու մինչև Սիրիա և Պաղեստին (Տարարա-էլ-Ակրադ, Կիրբետ-Կերակ):

Ինչպես տեսանք, մի հսկայական տերիտորիայում ուսումնասիրվող էպոխայում ի հայտ է գալիս իր հիմքում միասնական նյութական կուլտուրա, որի միասնությունը հատկապես ընդգրծված, հստակորեն նշվում է նրա համար բնորոշ խեցեղենով:

Խեցեղենի նմանություններն ի հայտ են գալիս ոչ միայն կավի բաղադրության, թրծման եղանակի, մակերեսի մշակման առանձնահատկությունների, կատարման տեխնիկայի միջոցով, այլ նաև խեցեղենի ձևերով, զարդանախշի միասնության և կատարման միջոցներով: Միաժամանակ խեցեղենի ուսումնասիրության միջոցով հաջողվում է գտնել նաև մի շարք տեղային առանձնահատկություններ:

Անդրկովկասյան էնեոլիթի թվադրման հարցում ներկայումս գիտնականների մեջ կան տարաձայնություններ: Ոմանք այն թվադրում են 3-րդ հազարամյակի վերջով և 2-րդ հազարամ.

⁴⁹ Նյութերը գտնվում են Բաքվի պատմության ինստիտուտում:

⁵⁰ Նյութերը գտնվում են Վրաստանի Պետական թանգարանում:

⁵¹ Б. А. Куфтин, Урартский «колумбарий», стр. 97—98, рис. 53, 2, табл. XXIV.

⁵² Б. А. Куфтин Археологические раскопки в Тrialeti, стр. 479.

յակի սկզբով մ. թ. ա., իսկ ոմանք էլ այն թվագրում են 4-րդ հազարամյակի վերջով: Սակայն գիտնականների բացարձակ մեծամասնությունը իրավամբ Անդրկովկասի էնեոլիթը թվագրում են 3-րդ հազարամյակով մ. թ. ա.:

Քանի որ մենք գեոևս համոզեցուցիչ շերտագրական տվյալներ չունենք, չենք կարող Անդրկովկասի էնեոլիթի խրոնոլոգիական էտապները հստակորեն առանձնացնել: Սակայն որոշ գիտնականներ Անդրկովկասի էնեոլիթյան հուշարձանների պերիոդիզացիայի նկատմամբ մի շարք հետաքրքիր դիտողություններ ունեն:

Հայաստանում, առաջինը Բ. Բ. Պիոտրովսկին որոշ տարրերակում մտցրեց էնեոլիթյան խեցեղենի պարզանախշերի մեջ, այն բացատրելով ժամանակագրական տարրերությամբ, Շրեշբուրգը և Քյուլ-Թափան համարելով ավելի վաղ էտապ, քան Շենդավիթի, իսկ էլարի բնակատեղին համեմատաբար ուշ⁵³:

Նման բնույթի մի այլ արժեքավոր դիտողություն է արել Բ. Ա. Կուֆտինը, Բեշտաշենի էնեոլիթյան խեցեղենի բաժանելով երեք խմբի, առաջին խմբին վերադրելով հաստ խեցի և մակերեսի ոչ շատ լավ մշակում, իսկ երկրորդ խումբը բնութագրելով բարձր տեխնիկական և զեղարվեստական որակով, վերջինիս մոտեցրել է Շենդավիթի, Շրեշբուրգի և Թաղավորանիստի խեցեղենը⁵⁴:

Եթե խմբավորենք Հայաստանի էնեոլիթյան խեցեղենը, ապա առաջին խմբի մեջ կմտնեն էսթիաժնի բնակատեղիների խեցեղենը (Շրեշբուրգ, Քյուլ-Թափա) և Շենդավիթի խեցեղենի մի մասը, որոնց համար բնորոշ են զծային կտրած երկրաչափական զարդանախշերի բացակայությունը և լայնակուս մոնումենտալ զարդանախշերի զարգացումը: Այս խմբին հաջորդում է Քոսի ձոթերի և Թաղավորանիստի խեցեղենը, որը կարծես անցման հատկանիշներով, օժանդակ խումբ է կազմում: Այստեղ արդեն հանդես են գալիս նեղ զծային երկրաչափական զարդանախշերի գոտին, ուելֆ-ներճկված զարդանախշերը պահպանվում են, բայց կատարված են ոչ թե լայն ակոսով, այլ նեղ և ոչ խորը ակոսով: 2-րդ խմբի մեջ մտնում է Շենդավիթի այն խեցեղենը, որտեղ ուելֆ-ներճկված զարդանախշերը քիչ տեղ են զբաղում և իրենց տեղը զիջում են նեղ զծային երկրաչափական զարդանախշերին, որոնք այստեղ մեծ զարգացում են ստանում:

Շենդավիթի և էլարի միջև անցման հատկանիշներով մի խումբ է կազմում Գառնին, որտեղ կան և Շենդավիթին բնորոշ խեցեղեն (զծային-երկրաչափական զարդացած զարդանախշերով դոստիներ) և էլարին (խեցեղեն, զարդարված ներճկված փոսիկներով): Երրորդ խումբը կազմում է էլարի ուշ էնեոլիթյան կամ վաղ բրոնզի խեցեղենը:

Այսպիսով այս հուշարձանները կարծես թե բնութագրում են Անդրկովկասյան էնեոլիթի զարգացման տարրեր էտապները, սակայն համոզեցուցիչ շերտագրական տվյալների բացակայության պայմաններում դժվար է ասել, մենք գործ ունենք լոկալ վարիանտների, թե՛ զարգացման տարրեր աստիճանների, պերիոդների հետ:

Այսպիսով Քոսի ձոթերի խեցեղենը մի անցողիկ օղակ է կազմում էսթիաժնի և Շենդավիթի զարդացած զծային զարդանախշերով խեցեղենի միջև: Հենվելով այս տվյալների վրա, Քոսի ձոթերի ստորին շերտը կարելի է թվագրել 3-րդ հազարամյակի 1-ին կեսի վերջով մ. թ. ա.

⁵³ Б. Б. Пиотровский, Археология Закавказья, стр. 34—36.

⁵⁴ Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, стр. 115—117.